«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» Հասարակական Կազմակերպություն

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31 դեկտեմբեր 2024թ.

ԵՐԵՎԱՆ 2025

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	8
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

.

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307/309
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

30 հունիսի 2025թ.
N 022525

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Վահե Գևորգյան
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» ՀԿ-ի ժողովին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» ՀԿ-ի և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

ADVISORY · ASSURANCE ·ACCOUNTING ·TAX
Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

Այլ հանգամանք

Խմբի 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորի կողմից, որը 2024 թվականի հունիսի 29-ին տրված եզրակացությամբ արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը/ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

- Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
- Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝
- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտոր
Շ. Թաշչիյան

30.06.2025թ.

ADVISORY · ASSURANCE ·ACCOUNTING ·TAX
Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	**Ծնթ.**	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործունեությունից եկամուտներ	4	10,963,899	5,344,219
Գործառնական ծախսեր	5	(6,133,915)	(5,461,653)
Վարչական ծախսեր	6	(2,508,532)	(2,435,780)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		**2,321,452**	**(2,553,214)**
Ֆինանսական եկամուտ		-	5,146
Ֆինանսական ծախս		(153,633)	(46,858)
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից օգուտ/(վնաս)		-	(343,969)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս), զուտ		118,855	(58,388)
Շահույթ մինչև հարկումը		**2,286,674**	**(2,997,283)**
Շահութահարկի գծով ծախս	7	(1,810)	(69,636)
Տարվա շահույթ/(վնաս)		**2,284,864**	**(3,066,919)**
Ընդամենը տարվա համապարփակ արդյունք		**2,284,864**	**(3,066,919)**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	Ծնթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	12,621,438	11,091,734
Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ	9	545,372	2,789,521
Ոչ նյութական ակտիվներ	10	111,644	120,726
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		265,197	25,055
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	11	358,115	891,429
Հետաձգված հարկային ակտիվ		11,093	10,328
		13,912,859	14,928,793
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	12	1,308,934	1,289,784
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13	492,284	254,621
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	2,311,839	2,615,705
Տրված փոխառություններ		23,000	25,300
		4,136,057	4,185,410
Ընդամենը ակտիվներ		18,048,916	19,114,203
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	15	12,872,928	13,977,915
Վարկեր և փոխառություններ	16	631,113	909,237
		13,504,041	14,887,152
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	876,728	736,938
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17	1,729,765	4,131,435
Շահութահարկի գծով պարտավորություն		-	107,620
Հետաձգված եկամուտ	18	3,067,861	2,665,401
		5,674,354	7,641,394
Ընդամենը պարտավորություններ		19,178,395	22,528,546
Զուտ ակտիվներ		(1,129,479)	(3,414,343)

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. հունիսի 30-ին:

Արմեն Մելիքբեկյան
Նախագահ

Վահրամ Ամիրյան
Գլխավոր հաշվապահ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	2,284,864	(3,066,919)
Ճշգրտումներ՝		
Շահութահարկի գծով ծախս	1,810	69,636
Մաշվածություն և ամորտիզացիա	1,083,689	1,035,152
Հիմնական միջոցների և ոչ ընթացիկ ակտիվների դուրսգրումից վնաս	1,248,978	690,959
Ֆինանսական ծախս	153,633	41,712
Շնորհներից եկամուտ	(8,954,918)	(3,853,519)
Արժեզրկման պահուստ	-	22,806
Արձակուրդային պահուստ	11,832	30,035
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(118,855)	58,388
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	**(4,288,967)**	**(4,971,750)**
Պաշարների փոփոխություն	(29,799)	12,246
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(243,380)	666,698
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	335,745	1,098,099
Հետաձգված եկամտի փոփոխություններ	4,587,951	2,881,057
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ	**361,550**	**(313,650)**
Վճարված տոկոսներ	(134,049)	(41,712)
Վճարված շահութահարկ	(99,102)	(80,619)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**128,399**	**(435,981)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերում	(463,328)	(718,846)
Տրված փոխառություններ	2,300	(19,606)
Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների փոփոխություններ	(97,130)	160,609
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(558,158)**	**(577,843)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկեր և փոխառություններ, զուտ	118,750	1,088,413
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**118,750**	**1,088,413**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(311,009)**	**74,589**
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	7,143	(17,157)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	2,615,705	2,558,273
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	**2,311,839**	**2,615,705**

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ներառում են «Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ «ՀՖՖ» կամ «Կազմակերպություն») և նրա 100% բաժնեմասնակցությամբ դուստր ընկերությունների՝ ՀՖՖ «Տեխնիկական կենտրոն-Ակադեմիա» ՓԲԸ-ի և ՀՖՖ «Վազգեն Սարգսյանի անվան մարզադաշտ» ՓԲԸ-ի (համատեղ՝ «Խումբ») ֆինանսական հաշվետվությունները:

ՀՖՖ-ն շահույթ չհետապնդող, ոչ առևտրային կազմակերպություն է, որը գրանցվել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2003 թվականի փետրվարի 21-ին՝ որպես «Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» Իրավաբանական անձանց միություն: 2018 թվականի հոկտեմբերի 2-ին այն վերագրանցվել է որպես հասարակական կազմակերպություն:

ՀՖՖ-ն ստեղծվել է անսահմանափակ գործունեության ժամկետով և ձևավորվել է որպես ֆուտբոլային ակումբների (որոնք ունեն հասարակական կազմակերպության կարգավիճակ) և ֆուտբոլի զարգացմանն աջակցող այլ շահույթ չհետապնդող կազմակերպությունների կամավոր միավորում: Կազմակերպության նպատակն է համակարգել իր անդամ կազմակերպությունների գործունեությունը, ներկայացնել և պաշտպանել նրանց ընդհանուր շահերը:

ՀՖՖ-ն ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) և եվրոպական ֆեդերացիայի (ՈՒԵՖԱ) լիիրավ անդամ է՝ Հայաստանի ֆուտբոլային ակումբների և հավաքականների շահերը նշված կառույցներում ներկայացնելու և պաշտպանելու բացառիկ իրավասությամբ:

ՀՖՖ-ի կառավարման մարմինները և պաշտոնատար անձինք իրենց գործունեության ընթացքում առաջնորդվում են ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրություններով, կանոնակարգերով, շրջաբերականներով և որոշումներով, ինչպես նաև ՖԻՖԱ-ի վարքագծի կանոններով:

Կազմակերպությունն իր գործունեության մեջ չեզոք է քաղաքական և կրոնական հարցերում:

ՀՖՖ-ն իրականացնում է գործունեություն Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, ինչպես նաև՝ արտերկրում: Կառավարման մարմինների աշխատանքային լեզուն հայերենն է:

ՀՖՖ-ի առաքելությունն է՝

- Քարոզել և զարգացնել ֆուտբոլը Հայաստանի Հանրապետությունում, բարձրացնել նրա դերը անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման գործում, հավասարեցնել հայկական ֆուտբոլի մակարդակը միջազգային չափանիշներին և հնարավոր բոլոր միջոցներով ամրապնդել միջազգային մարզական հարաբերությունները ֆուտբոլի ոլորտում:
- Ընդունելի բոլոր միջոցներով զարգացնել, աջակցել, վերահսկել և կարգավորել ֆուտբոլ մարզաձևը Հայաստանի ողջ տարածքում՝ ղեկավարվելով ազնիվ խաղի սկզբունքներով:
- Պաշտպանել իր անդամների իրավունքներն ու շահերը:

ՀՖՖ-ի նպատակներն են՝

- Զարգացնել և ամրապնդել համագործակցությունը Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) և Եվրոպայի ֆուտբոլի ֆեդերացիաների միության (ՈՒԵՖԱ) հետ:
- Ապահովել գործնական և կայուն հարաբերությունների զարգացումը Երևանի և Հայաստանի Հանրապետության մարզերի ֆուտբոլային ֆեդերացիաների ու ակումբների հետ:
- Մշակել և իրականացնել ֆուտբոլի զարգացման երկարաժամկետ ծրագրեր Հայաստանի Հանրապետությունում:

- Կազմակերպել ֆուտբոլային մրցաշարեր՝ սահմանելով Հանրապետության առաջնության, գավաթի խաղարկության և այլ մրցումների կառուցվածքը, կանոնակարգը և օրացույցը:
- Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպել և անցկացնել հանրապետական և միջազգային մրցաշարեր, ինչպես նաև վերահսկել անցկացվող բոլոր ընկերական խաղերը:
- Բարելավել բարձրակարգ մարզիկների պատրաստման համակարգը՝ ապահովելով ազգային հավաքականների և ակումբների մրցունակ մասնակցությունը միջազգային մրցումներին:
- Ձեռնարկել միջոցներ՝ ֆուտբոլի մասնագետների և մրցավարների մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով:
- Կազմակերպել մարզչական կադրերի և այլ մասնագետների ընտրություն՝ ազգային հավաքականներում և այլ ֆուտբոլային կառույցներում աշխատանքի համար:
- Ուսումնասիրել և համադրել հայրենական ու միջազգային ֆուտբոլային ավանդույթներն ու փորձը, կիրառել գիտամեթոդական նվաճումները գործնականում:
- Ժամանակին կանխել ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնադրությունների խախտումները, ինչպես նաև ցանկացած ոչ մարզական վարքագիծ և չարաշահում ֆուտբոլի ոլորտում:
- Ապահովել մարզիկների, մարզիչների և այլ մասնագետների սոցիալական պաշտպանվածությունը, ինչպես նաև հոգատարություն ցուցաբերել ֆուտբոլի վետերանների նկատմամբ:
- Օրենքով սահմանված կարգով լուսաբանել ֆուտբոլային իրադարձությունները, հրատարակել նորություններ, ինչպես նաև գիտամեթոդական ձեռնարկներ:
- Իրականացնել կանոնադրական նպատակներին համահունչ և օրենքով չարգելված այլ գործունեություն:

Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը 2024 թվականին կազմել է 259 աշխատող (2023 թվականին՝ 265 աշխատող):

Գործարար միջավայր

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2024թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական

հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Մյուս կողմից, ՀՀ կենտրոնական բանկը ոչ մի միջոց չձեռնարկեց, որպեսզի թուլացնի հայկական ազգային արժույթի դիրքերը:

Ղեկավարությունը չի ակնկալում, որ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հետագա արժևորում կլինի: Այնուամենայնիվ, Ուկրաինայում շարունակվող հակամարտությունը կարող է հանգեցնել Հայաստան դեռևս ավելի մեծ արտարժույթի ներհոսքի, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ Խմբի ֆինանսական կայունության վրա: Այս ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում վերը նշվածի հնարավոր ազդեցությունը:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Խմբի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ իր ընթացիկ իրացվելիության վիճակը բավարար է կայուն գործունեության համար: Խումբը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբը իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն [թիվ]-ում:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 19-ում: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.5 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության փոփոխություններ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
Տարբեր	ՖՀՄՍ 17, ՀՀՄՍ 12, ՀՀՄՍ 8, ՀՀՄՍ 1, ՖՀՄՍ ՓՄՁ-ների համար փոփոխություններ

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՀՀՄՍ 1	Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)	1 հունվարի 2024թ.
ՖՀՄՍ 16	Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության	1 հունվարի 2024թ.
ՀՀՄՍ 1	Ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)	1 հունվարի 2024թ.
ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7	Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)	1 հունվարի 2024թ.
ՀՀՄՍ 21	Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություն)	1 հունվարի 2025թ.

2.6 Դուստր ընկերություններ

Ստորև ներկայացված են դուստր կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Անվանում	Մայր կազմակերպության գտնվելու վայր	Մեփականության բաժնեմասեր 2024թ	Մեփականության բաժնեմասեր 2023թ.
«ՀՖՖ-ի Տեխնիկական Կենտրոն-Ակադեմիա» ՓԲԸ	ՀՀ	100%	100%
«ՀՖՖ-ի Վազգեն Սարգսյանի անվան մարզադաշտ» ՓԲԸ	ՀՀ	100%	100%

3. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

3.1 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերությունների շահույթը կամ վնասը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից կամ մինչև օտարման ամսաթիվը, որը կիրառելի է:

3.2 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 413.89 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ): Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, կառուցվածքներ	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	3-5 տարի
Տրանսպորտային միջոցներ	5 տարի
Գրասենյակային գույք	3-5 տարի
Այլ հիմնական միջոցներ	3-10 տարի

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված

ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի հաշվապահական հաշվառման ծրագրերի և այլ ոչ նյութական ակտիվների համար:

3.5 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Խմբին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված

կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Խումբն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.8 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,

- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող։

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները։

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են տարվա արդյունքում, արտացոլված են ֆինանսական ծախսերում և ֆինանսական եկամտում։ Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 20.2-ում։

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ։

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։ Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում։ Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը։

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են ստացված վարկերն ու փոխառությունները և կրեդիտորական պարտքերը ։ Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 20.2-ում։

3.9 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները։ Դրանք ներառում են՝

- աշխատավարձերը և պարգևավճարները,
- վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո։ Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

- որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.10 Գործառնական եկամուտ

Խմբի եկամուտը ձևավորվում է հիմնականում դրամաշնորհներից, ինչպես նաև՝ տոմսերի վաճառքից, մանրածախ վաճառքից, հյուրընկալության և սննդի ծառայություններից, վարձակալությունից, ակադեմիական մարզահավաքներից և այլ կոմերցիոն միջոցառումներից: Դուստր ընկերությունների հասույթը հիմնականում կապված է հյուրանոցային և սպորտային ենթակառուցվածքների ծառայությունների մատուցման հետ:

Ծառայությունների մատուցում

Խումբը ծառայությունների հետ կապված եկամուտը ստանում է հիմնականում ազգային և միջազգային ֆուտբոլային մրցաշարերի կազմակերպման, մարզիչների և մրցավարների համար վերապատրաստման և արտոնագրման ծրագրերի տրամադրման, ինչպես նաև ֆուտբոլային ակումբներին և տարածքային ֆեդերացիաներին տեխնիկական և լոգիստիկ աջակցություն ցուցաբերելու միջոցով:

Դրամաշնորհներից ստացվող եկամուտ

Եկամուտների ճանաչման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3.6-ում:

4. Գործունեությունից եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներին վերաբերող շնորհներից	6,634,326	1,886,910
Ակտիվներին վերաբերող շնորհներից	2,320,592	1,966,609
Ծառայությունների մատուցում	1,508,791	1,032,492
Ապրանքների վաճառք	239,524	276,248
Այլ եկամուտներ	260,666	181,960
	10,963,899	**5,344,219**

5. Գործունեությունից ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	1,463,145	1,410,000
Վաճառքի ինքնարժեք (*)	906,665	716,550
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	1,307,115	508,694
Կեցության և սննդի ապահովման ծախսեր	361,711	379,840
Ավիատոմսերի և գնացքի տոմսերի ձեռքբերման ծախսեր	420,841	350,221
Պարգևատրումներ և մրցանակներ	146,522	341,073
Ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկումից կորուստներ	-	280,252
Հարկերի, տուրքերի և տույժերի գծով ծախսեր	101,014	269,514
Վիզայի և ապահովագրության գծով ծախսեր	22,008	214,099
Մարզական գույքի ձեռքբերում	301,789	193,178
ՈՒսումնամարզական հավաքների և պաշտոնական հանդիպումների գծով ծախսեր	23,243	41,783
Անվտանգության ապահովման ծախսեր	68,755	86,096
Տրանսպորտային ծախսեր	180,063	74,206
Հիմնական միջոցների մաշվածություն	4,448	73,706
Կազմակեպչական ծախսեր	185,199	60,182
Վերանորոգման ծախսեր	32,152	37,881
Ներկայացուցչական ծախսեր	39,162	33,619
Կադրերի վերապատրաստման և զարգացման ծախսեր	82,579	32,809
Բուժզննության և հետազոտությունների գծով ծախսեր	67,134	54,959
Օրապահիկ	17,090	26,042
Խաղերի վերլուծություն	31,758	23,411
Մարզադաշտի կամ մարզադահլիճի վարձակալություն գծով ծախսեր	28,542	21,534
Արտարժույթի փոխարկումից առաջացած կորուստներ	54,933	27,267
Այլ գործառնական ծախսեր	288,047	204,738
	6,133,915	**5,461,653**

(*) Վաճառքի ինքնարժեքի վերլուծությունը, որը ներառում է հետևյալ ծախսերը, ամփոփված է ստորև բերված աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	437,872	396,681
Սննդամթերք և խմիչքներ	125,793	104,027
Ծառայությունների ձեռքբերում	119,163	15,714
Ապրանքներ և նյութեր	208,040	184,708
Հիմնական միջոցների մաշվածություն	13,823	14,138
Այլ ծախսեր	1,974	1,282
	906,665	**716,550**

6. Վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	875,459	847,567
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	20,476	24,398
Մաշվածություն և ամորտիզացիա	1,065,418	1,090,280
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	52,931	22,072
Փոստի և հեռահաղորդակցության գծով ծախսեր	30,873	35,607
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	24,894	33,171
Աուդիտորական և խորհրդատվության ծախսեր	17,843	7,200
Բանկային ծառայության ծախսեր	9,203	8,406
Ոչ ռեզիդենտի ԱԱՀ-ի գծով պակասեցման ծախսեր	40,608	13,617
Վարչական այլ ծախսեր	370,827	353,462
	2,508,532	**2,435,780**

7. Շահութահարկի գծով ծախս

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Հաշվետու տարում շահութահարկի դրույքաչափը սահմանված է ՀՀ հարկային օրենսգրքով և կազմում է 18% (2023թ.՝ 18%)։

Հազար ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	2,575	70,468
Հետաձգված հարկ	(765)	(832)
	1,810	**69,636**

8. Հիմնական միջոցներ

	Շենքեր	Կառուց-վածքներ	Սարքա-վորումներ	Տրանս-պորտային միջոցներ	Գրասենյա-կային գույք	Այլ	Հողեր	Ընդամենը
Սկզբնական արժեք								
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**10,333,427**	**5,438,164**	**820,656**	**268,705**	**774,419**	**350,149**	**1,993,745**	**19,979,265**
Ավելացում	-	10,270	889,795	10,163	22,135	90,199	75,511	1,098,073
Օտարում/դուրսգրում	(330,266)	(715,664)	(37,272)	(6,156)	(29,044)	(2,365)	(34,729)	(1,155,496)
Վերադասակարգում	-	476,844	1,211	(2,574)	(158,495)	(1,628)	-	315,358
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,003,161**	**5,209,614**	**1,674,390**	**270,138**	**609,015**	**436,355**	**2,034,527**	**20,237,200**
Ավելացում	22,028	2,542	48,394	224	21,209	98,769	-	193,166
Օտարում/դուրսգրում	-	(511,230)	(181,028)	-	(4,864)	(86,769)	-	(783,891)
Վերադասակարգում	1,981,752	947,812	37,117	-	2,092	218,572	-	3,187,345
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**12,006,941**	**5,648,738**	**1,578,873**	**270,362**	**627,452**	**666,927**	**2,034,527**	**22,833,820**
Կուտակված մաշվածություն								
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**4,962,945**	**1,794,066**	**657,149**	**212,761**	**642,840**	**223,740**	**-**	**8,493,501**
Տարվա հաշվարկ	569,706	288,782	64,139	15,008	37,334	122,565	-	1,097,534
Օտարման հետևանքով դուրսգրում	(77,872)	(168,514)	(35,053)	(4,628)	(21,916)	(1,916)	-	(309,899)
Վերադասակարգում	-	60	74,982	(2,573)	(133,097)	(75,042)	-	(135,670)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,454,779**	**1,914,394**	**761,217**	**220,568**	**525,161**	**269,347**	**-**	**9,145,466**
Տարվա հաշվարկ	582,745	243,958	144,196	11,596	30,481	39,505	-	1,052,481
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(11)	(2,934)	-	(4,864)	(613)	-	(8,422)
Վերադասակարգում	3	1,289	13,511	-	2,136	5,918	-	22,857
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,037,527**	**2,159,630**	**915,990**	**232,164**	**552,914**	**314,157**	**-**	**10,212,382**
Հաշվեկշռային արժեք								
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,548,382**	**3,295,220**	**913,173**	**49,570**	**83,854**	**167,008**	**2,034,527**	**11,091,734**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,969,414**	**3,489,108**	**662,883**	**38,198**	**74,538**	**352,770**	**2,034,527**	**12,621,438**

9. Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	2,789,521	2,950,130
Ավելացումներ	97,130	373,237
Վերադասակարգում հիմնական միջոցներին	(2,341,279)	(533,846)
Մնացորդը դեկտեմբեր 31-ի դրությամբ	**545,372**	**2,789,521**

Անավարտ ոչ ընթացիկ ակտիվների շարժի վերլուծությունը ամփոփված է ստորև ներկայացված աղյուսակներում.

2024թ. Հազար ՀՀ դրամ

Մարզադաշտեր	2024թ. հունվարի 1-ի դրությամբ	Շարժ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
		Ավելացում	Նվազեցում	
Վանաձորի մարզադաշտ	1,143,201	1,608	(1,144,046)	763
Աբովյանի մարզադաշտ	1,042,555	4,805	(1,047,360)	-
Խ. Հովհաննիսյանի անվան ֆուտբոլի	544,339	270	-	544,609
Արևային ֆոտովոլտային համակարգ	59,426	90,447	(149,873)	-
	2,789,521	**97,130**	**(2,341,279)**	**545,372**

2023թ. Հազար ՀՀ դրամ

Մարզադաշտեր	2023թ. հունվարի 1-ի դրությամբ	Շարժ		2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
		Ավելացում	Նվազեցում	
Արմավիրի հոբելյանական մարզադաշտ	476,243	-	(476,243)	-
Վանաձորի մարզադաշտ	1,121,077	22,124	-	1,143,201
Աբովյանի մարզադաշտ	1,072,958	27,200	(57,603)	1,042,555
Խ. Հովհաննիսյանի անվան ֆուտբոլի	279,852	264,487	-	544,339
Արևային ֆոտովոլտային համակարգ	-	59,426	-	59,426
	2,950,130	**373,237**	**(533,846)**	**2,789,521**

10. Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**44,135**	**98,594**	**142,729**
Ավելացում	25,577	6,403	31,980
Վերադասակարգում	66,330	(66,330)	-
Վերադասակարգում հիմնական միջոցներին	160,887	-	160,888
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**296,929**	**38,667**	**335,596**
Ավելացում	30,020	-	30,020
Վերադասակարգում	(12,176)	12,176	-
Վերադասակարգում հիմնական միջոցներին	-	(9,752)	(9,752)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**314,773**	**41,091**	**355,864**
Ամորտիզացիա			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**24,438**	**16,576**	**41,014**
Տարվա հաշվարկ	23,590	14,596	38,186
Վերադասակարգում հիմնական միջոցներին	135,670	-	135,670
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**183,698**	**31,172**	**214,870**
Տարվա հաշվարկ	22,475	8,733	31,208
Վերադասակարգում հիմնական միջոցներին	-	(1,858)	(1,858)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**206,173**	**38,047**	**244,220**
Հաշվեկշռային արժեք			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**113,231**	**7,495**	**120,726**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**108,600**	**3,044**	**111,644**

11. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բնական խոտածածկով խաղադաշտ, մարզադաշտ, մարզադպրոց	179,085	491,351
Արհեստական խոտածածկով խաղադաշտ	179,030	400,079
	358,115	**891,430**

11.1 Բնական խոտածածկով խաղադաշտ, մարզադաշտ, մարզադպրոց

Հազար ՀՀ դրամ

Անավարտ շինությունների գտնվելու վայրը	2024թ. հունվարի 1-ի դրությամբ	Շարժ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
		Ավելացում	Նվազեցում	
Ք. Սևան	299,206	-	(299,206)	-
Ներքին Կարմիր Աղբյուր	158,731	-	-	158,731
Արարատի մարզ	20,216	-	(13,059)	7,157
Շիրակի մարզ	13,197	-	-	13,197
	491,350	**-**	**(312,265)**	**179,085**

11.2 Արհեստական խոտածածկով խաղադաշտ

Հազար ՀՀ դրամ

Մարզադաշտերի գտնվելու վայրը մարզերում	2024թ. հունվարի 1-ի դրությամբ	Շարժ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
		Ավելացում	Նվազեցում	
Կոտայքի մարզ	178,713	292,221	(339,731)	131,203
Գեղարքունիքի մարզ	165,252	13,360	(161,243)	17,369
Արմավիրի մարզ	36,073	-	(36,073)	-
Երևան	16,033	101,883	(117,916)	-
Արարատի մարզ	4,008	25,262	(17,370)	11,900
Սյունիքի մարզ	-	129,992	(129,992)	-
Տավուշի մարզ	-	18,060	(17,370)	690
Վայոց ձորի մարզ	-	17,868	-	17,868
Արագածոտնի մարզ	-	17,406	(17,406)	-
	400,079	**616,052**	**(837,101)**	**179,030**

12. Պաշարներ

Հազար ՀՀ դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Նյութեր	33,073	26,477
Վառելիք	1,371	2,345
Պահեստամասեր	1,729	1,727
Այլ նյութեր	1,061,895	1,049,005
Ապրանքներ պահեստում	216,451	215,815
	1,314,519	**1,295,370**
Արժեզրկման պահուստ	(5,585)	(5,586)
	1,308,934	**1,289,784**

13. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	189,723	58,384
	189,723	**58,384**
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Կանխավճարներ	52,699	286,929
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	329,858	6,066
Այլ դեբիտորական պարտքեր	58,393	41,631
Արժեզրկման պահուստ	(138,389)	(138,389)
	302,561	**196,237**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**492,284**	**254,621**

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ	2,308,435	2,584,264
Կանխիկ միջոցներ	3,404	31,441
	2,311,839	**2,615,705**

15. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**13,977,915**	**14,665,525**
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	722	85,466
Վերադասակարգում հետաձգված եկամտից (տես՝ ծանոթագրություն 18)	1,214,883	1,193,533
Եկամտի ճանաչում (տես՝ ծանոթագրություն 4)	(2,320,592)	(1,966,609)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**12,872,928**	**13,977,915**

16. Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապահովված բանկային վարկեր	876,728	736,938	-	-
Չապահովված վարկ ՈՒԵՖԱ-ից	-	-	631,113	909,237

876,728	**736,938**	**631,113**	**909,237**

Բանկային վարկերն ունեն 2 տարի մարման ժամկետ և տարեկան 7.5% միջին տոկոսադրույք (2023թ. ՝ 7.0% տոկոսադրույք)։

Վարկերի և փոխառությունների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ։

Բանկային վարկերի ապահովվածության մանրամասներն ամփոփված են ստորև աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ	Պայմանգրի համարը	Արժույթ	Բացված	Գումար
ՀՖՖ Տեխնիկական Կենտրոբ-Ակադեմիա ՓԲԸ	17/14284-1	ՀՀ դրամ	2023թ	5,000,000
ՀՖՖ Վ. Սարգսյանի Անվան Հանրային Մարզադաշտ ՓԲԸ	17/14284-2	ՀՀ դրամ	2023թ	5,000,000
Դրամական հոսքեր	17/14284-3	ՀՀ դրամ	2023թ	750,000

17. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	88,831	94,341
Ստացված կանխավճարներ	1,057,158	3,512,515
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	160,772	148,940
Կրեդիտորական պարտքեր ձեռքբերումների գծով	412,602	357,191
Կրեդիտորական պարտքեր հիմնական միջոցների գծով	-	9,898
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	8,647	2,132
Այլ	1,755	6,418
	1,729,765	**4,131,435**

18. Հետաձգված եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**2,665,401**	**2,950,253**
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	5,504,683	2,795,591
Վերադասակարգում ստացված կանխավճարներից	2,746,986	-
Շնորհի ճանաչումը որպես եկամուտ (տես՝ ծանոթագրություն 4)	(6,634,326)	(1,886,910)
Վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհներին (տես՝ ծանոթագրություն 15)	(1,214,883)	(1,193,533)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,067,861**	**2,665,401**

19. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

19.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի ապացույցները: Այս պաշարների ապագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող այլ փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում (տե՛ս ծանոթագրություն 22):

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիության գծով հաշվապահական հաշվառման գնահատումները կապվում են վարկունակության հետ: Ծանոթագրություն 21-ում անդրադարձ է կատարվում ֆինանսական ակտիվների և դրանց թվում դեբիտորական պարտքերի ռիսկերի գնահատմանը:

19.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Համախմբման նպատակով վերահսկողության գնահատում

Համախմբման նպատակով Խումբը գնահատում է արդյո՞ք վերահսկում է ներդրման օբյեկտը: Վերահսկողություն առկա է, եթե Խումբը ներդրման օբյեկտում իր ներգրավվածության արդյունքում ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և ներդրման օբյեկտի նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն:

Փաստացի վերահսկողություն առկա է, եթե Խմբի քվեարկության իրավունք ունեցող բաժնեմասնակցությունն այլ քվեարկողների իրավունքների ու բաշխվածության համեմատ, Խմբին տալիս է անվերապահ գործնական իրավունք ուղղորդելու ներդրման օբյեկտի համապատասխան գործառնությունները:

Խումբն ունի 100% քվեարկության իրավունք բոլոր դուստր կազմակերպություններում (ծնթ. 2.6):

Խումբը գնահատում է, որ ունի անվերապահ գործնական կարողություն ուղղորդելու դուստր կազմակերպությունների համապատասխան գործառնությունները, ուստի համախմբում է այս դուստր կազմակերպությունները՝ առանց չվերահսկվող-բաժնեմասի:

Շնորհների ճանաչում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 3.6-ում՝ շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները և որ շնորհը ստացվելու է: Յուրաքանչյուր դրամաշնորհային պայմանագրի համար Խումբը գնահատում է, թե որքանով է հավանական, որ այն ամբողջովին կավարարի դրամաշնորհին կցված պայմանները և շնորհն ամբողջովին կստանա: Նման գնահատում կատարելիս ղեկավարությունը հիմնվում է այդ դոնորի հետ ունեցած նախկին փորձի, նման դրամաշնորհներն ամբողջովին իրականացնելու Խմբի հնարավորության վրա: Եթե ղեկավարության գնահատմամբ Խումբն ի վիճակի է բավարարելու դրամաշնորհին կից պայմանները և դոնորը պատրաստ է ամբողջովին Խմբին փոխանցել դրամաշնորհով նախատեսված գումարները, ապա Խումբը նման դրամաշնորհն անմիջապես ճանաչում է ֆինանսական հաշվետվություններում (որպես դոնորների գծով դեբիտորական պարտք և հետաձգված եկամուտ): Այնուամենայնիվ, եթե ղեկավարությունը սխալվի իր գնահատումներում, ապա կառաջանա ֆինանսական հաշվետվությունները ճշգրտելու անհրաժեշտությունը և այդ ճշգրտումները կարող են էական լինել Խմբի ֆինանսական հաշվետվությունների համար:

20. Ֆինանսական գործիքներ

20.1 Էական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 3.8-ում:

20.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	189,723	58,384
Տրված փոխառություններ	23,000	25,300
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,311,839	2,615,705
	2,524,562	**2,699,389**

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	412,602	357,191
Վարկեր և փոխառություններ	1,507,841	1,646,175
	1,920,443	**2,003,366**

21. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրից ստացվող դրամաշնորհներից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով: Բացի այդ Խումբն ունի եվրոյով վարկ որը հաշվառվում է իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հոդված

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	64,401	1,922	43
	64,401	**1,922**	**43**
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	-	1,507,841	-
Կրեդիտորական պարտքեր	-	10,623	-
	-	**1,518,464**	**-**
Զուտ արդյունք	**64,401**	**(1,516,542)**	**43**

Հոդված

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	72,205	2,307	37
	72,205	**2,307**	**37**
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	-	1,646,175	-
Կրեդիտորական պարտքեր	-	8,062	1,312
	72,205	(1,651,930)	(1,275)
Զուտ արդյունք	**72,205**	**(1,611,479)**	**(1,275)**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	6,440	7,221	(151,654)	(161,148)
	6,440	**7,221**	**(151,654)**	**(165,193)**

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2024թ.	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա-դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		5.6 %	
Մինչև 6 ամիս	412,602	-	412,602
1-5 տարի	-	1,507,841	1,507,841
	412,602	**1,507,841**	**1,920,443**

2023թ.	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա-դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		5.6 %	
Մինչև 6 ամիս	357,191	-	357,191
1-5 տարի	-	1,646,175	1,646,175
	357,191	**1,646,175**	**2,003,366**

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

22. Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Հետևյալ աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում՝ 2024թ. դեկտմբերի 31-ի դրությամբ:

Հոդված	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Առևտրային դեբիտորական պարտքեր	189,723	Ընթացիկ Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	3-րդ մակարդակ	Կիրառելի չէ
Տրված փոխառություններ	23,000	Ընթացիկ Կարճաժամկետ (12 ամսից պակաս) տրված փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	3-րդ մակարդակ	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	412,602	Ընթացիկ Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	3-րդ մակարդակ	Կիրառելի չէ
Վարկեր և փոխառություններ	1,507,841	Ոչ ընթացիկ Երկարաժամկետ (մինչև 5 տարի) վարկերի և փոխառությունների պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	3-րդ մակարդակ	Կիրառելի չէ

23. Պայմանականություններ

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում։ Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն։ Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա։

Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

24. Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	98,487	101,895